ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կարիքների համար տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված թիվ ՏԿԵՆ-ՀԲՄԽԾՁԲ-2025/52ՏՀ ծածկագրով հրատապ բաց մրցույթի հայտերի բացման և գնահատման հանձնաժողովի նիստի

ք.Երևան **Մեկնարկ՝ «13» «հոկտեմբերի» 2025թ.**
ժամը՝ 12:00
Ավարտ՝ «06» «նոյեմբերի» 2025թ.
ժամը՝ 10:00

Մասնակցում էին.

Հանձնաժողովի նախագահ

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ճանապարհային ոլորտի քաղաքականության վարչության պետ՝ (ԳՊ/ԳԱՊ)՝ Հարություն Սեդրակյան

անդամներ՝

«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի հիմնանորոգման ծրագրերի կառավարման բաժնի ավագ ինժեներ (հանձնաժողովի անդամ՝ ԳՊ/ԳԱ)՝ Աստղիկ Խաչատրյան

«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի հիմնանորոգման ծրագրերի կառավարման բաժնի ավագ ինժեներ (հանձնաժողովի անդամ՝ ԳՊ/ԳԱ)՝ Հրանտ Մինասյան

«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի հիմնանորոգման ծրագրերի կառավարման բաժնի ավագ ինժեներ (հանձնաժողովի անդամ՝ ԳՊ/ԲԱ)՝ Էդգար Ֆրանգուլյան

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության իրավաբանական վարչության օրենսդրության բաժնի գլխավոր իրավախորհրդատու (հանձնաժողովի անդամ՝ ԳՊ/ԲԱ)՝ Լաուրա Գևորգյան

Հանձնաժողովի քարտուղար՝

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության գնումների համակարգման և կազմակերպչական վարչության գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետ (հանձնաժողովի քարտուղար՝ ԳՊ/ՄՀՄ)՝ Անի Բաղալյան

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 26-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետը հանձնաժողովի կողմից նիստը համարվեց իրավազոր և սահմանված կարգով վարվեց հանձնաժողովի կազմում ընդգրկման առաջնահերթության նախագահի թեկնածուից հետո նշված՝ նիստին ներկա հաջորդող թեկնածուն:

1. Տեղեկատվություն՝ ՏԿԵՆ-ՀԲՄԽԾՁԲ-2025/52ՏՀ ծածկագրով ընթացակարգի շրջանակում ներկայացված հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին

1.1 **ՏԿԵՆ-ՀԲՄԽԾՁԲ-2025/52ՏՀ** ծածկագրով հրատապ բաց մրցույթի հայտերը էլեկտրոնային ձևով www.armeps.am կայքի միջոցով բացվել են **2025 թվականի հոկտեմբերի 13-ին ժամը՝ 12:00-ին:**

2. Տեղեկատվություն՝ գնման հայտով սահմանված՝ գնվելիք ծառայությունների գների վերաբերյալ

Հ/Հ	Չափաբաժնի անվանումը	գնվելիք ծառայությունների մատուցման համար գնման հայտով սահմանված գնման գինը /ՀՀ դրամ/
1	Տ-2-3,Ներքին Չարբախ-Դարակերտ-Հ-13 (Դաշտավան) տեղական նշանակության ավտոճանապարհի կմ 0+000-կմ	7 534 230

	2+200 հատվածի հիմնանորոգման աշխատանքների նկատմամբ տեխնիկական հսկողության ծառայություն	
2	S-2-26, /S-2-25/ (Բարձրաշեն) - Երևանի սահման (Նուբարաշեն) մարզային նշանակության ավտոճանապարհի կմ0+000-կմ1+400 հատվածի հիմնանորոգման աշխատանքների նկատմամբ տեխնիկական հսկողության ծառայություն	4 397 690

3. Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումների (անունների) և էլեկտրոնային հասցեների հրապարակում

3.1. Հայտեր են ներկայացվել հետևյալ մասնակիցների կողմից.

N	Մասնակիցների անվանումները	Հասցե /ՀՎՀՀ/	Էլ. փոստ
1	«Ճաննախագիծ ինստիտուտ» ՍՊԸ	ՀՀ, ք. Երևան, Աճառյան 54բ /00813453/	lilit.poghosyan@doproject.am lil.poghosyan17@gmail.com
2	«Սուֆետ» ՍՊԸ	ՀՀ, ք. Երևան, Փիրումյանների 4/3, բն.11 /07404587/	sufet16@gmail.com.
3	«Արխինէքս» ՍՊԸ	ՀՀ, Արմավիրի մ., գ. Փարաքար, Արարատյան փ., 19/1 տուն /01249769/	archineqs@mail.ru
4	«Սուար» ՍՊԸ	ՀՀ, ք. Երևան, Շենգավիթ ՎՇ, Բգրատունյաց 15-54 /02290783/	suro4350@gmail.com

4. Տեղեկատվություն՝ բացված յուրաքանչյուր էլեկտրոնային փաթեթում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության և հրավերի պայմաններին համապատասխանության վերաբերյալ

4.1 Մասնակիցների կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված փաթեթներում առկա էին անհամապատասխանություններ, մասնավորապես՝

- «Արխինէքս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում արձանագրվել են անհամապատասխանություններ, մասնավորապես՝ Պայմանագրի կատարման համար ներկայացված հիմնական մասնագետների ցանկում ներառված Հայկ Ավագյանի կողմից հաստատված /1-ին չափաբաժին և 2-րդ չափաբաժին/ համաձայնագրերում ընթացակարգի ծածկագիրը «ՏԿԵՆ-ՀԲՄԽԾՁԲ-2025/52ՏՀ»-ի փոխարեն նշված էր «ՏԿԵՆ-ԲՄԽԾՁԲ-2025/52ՏՀ» և հայտով ներկայացված անձնակազմում 2-րդ չափաբաժնի մասով որպես տեխնիկական հսկիչ ներգրաված՝ Գոռ Մարկոսյանի ինքնակենսագրականը հաստատված չէր էլեկտրոնային թվային ստորագրությամբ տվյալ անձի կողմից:
- «Սուֆետ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում արձանագրվել են անհամապատասխանություններ, մասնավորապես՝ հայտով ներկայացված Հավելված 1.1-ը չէր համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին և Հավելված 2.1-ը չէր համապատասխանում գնային առաջարկին /Հավելված 2/:
- «Սուար» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում արձանագրվել են անհամապատասխանություններ, մասնավորապես՝ Հայտով ներկայացված Հավելված 1.1-ը չէր համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին և Հայտով ներկայացված նմանատիպ պայմանագիրը գումարային արտահայտությամբ չէր բավարարում Հրավերի 1-ին մասի 2-րդ կետի 2.4 ենթակետով սահմանված պահանջներին:

Հանձնաժողովը որոշեց՝

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետով՝ 30.10.2025թ. մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և առաջարկել մասնակիցներին ծանուցումը ստանալու օրվանից մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

03.11.2025 թվականին, ժամը 15:00–ին կայացած նիստում հանձնաժողովը շարունակեց աշխատանքները:

5. Տեղեկություն՝ ՏԿԵՆ-ՀԲՄԽԾՁԲ-2025/52ՏՀ ընթացակարգի շրջանակում ներկայացված հայտերում արձանագրված հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանությունների շտկման մասին

5.1 Ընդունել ի գիտություն, որ մասնակիցների կողմից հրավերով սահմանված ժամկետում շտկվել են հայտերում առկա անհամապատասխանությունները:

6. Տեղեկատվություն՝ յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը

6.1 Հրավերի պահանջներին համապատասխան գնային առաջարկներ են ներկայացվել հետևյալ մասնակիցների կողմից՝

Չափաբաժին 1 Տ-2-3,Ներքին Չարբախ-Դարակերտ-Հ-13 (Դաշտավան) տեղական նշանակության ավտոճանապարհի կմ 0+000-կմ 2+200 հատվածի հիմնանորոգման աշխատանքների նկատմամբ տեխնիկական հսկողության ծառայություն

Հ/Հ	Մասնակիցների անվանումները	Գինն առանց ԱԱՀ	ԱԱՀ	Ընդհանուր
1	**«Արխինէքս» ՍՊԸ**	**2 880 000**	**0**	**2 880 000**
2	«Ճաննախագիծ ինստիտուտ» ՍՊԸ	3 665 000	733 000	4 398 000
3	«Սուֆետ» ՍՊԸ	3 750 000	750 000	4 500 000
4	«Սուար» ՍՊԸ	4 000 000	0	4 000 000

Չափաբաժին 2 Տ-2-26, /Տ-2-25/ (Բարձրաշեն) - Երևանի սահման (Նուբարաշեն) մարզային նշանակության ավտոճանապարհի կմ0+000-կմ1+400 հատվածի հիմնանորոգման աշխատանքների նկատմամբ տեխնիկական հսկողության ծառայություն

Հ/Հ	Մասնակիցների անվանումները	Գինն առանց ԱԱՀ	ԱԱՀ	Ընդհանուր
1	**«Արխինէքս» ՍՊԸ**	**2 000 000**	**0**	**2 000 000**
2	**«Սուար» ՍՊԸ**	**2 000 000**	**0**	**2 000 000**
3	«Սուֆետ» ՍՊԸ	2 500 000	500 000	3 000 000

6.2 Մասնակցի հայտի հաշվարկման ճշգրտությունը (տառերով, հայտում ներկայացված հայտերի համարներին արտահայտված տվյալների համապատասխանությունը), ինչպես նաև հաշվարկի թվաբանական ճշգրտությունը համապատասխանում է (ճիշտ է):

7. Տեղեկություն՝ «ՏԿԵՆ-ՀԲՄԽԾՁԲ-2025/52ՏՀ» ծածկագրով հրատապ բաց մրցույթի գների նվազեցման շուրջ բանակցությունների մասին

7.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց 2025 թվականի նոյեմբերի 6-ին ժամը 10:00-ին «Արխինէքս» ՍՊ և «Սուար» ՍՊ ընկերություններին հրավիրել գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների 2-րդ չափաբաժնի մասով՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության շենքում, հասցեն՝ ՀՀ, ք.Երևան 0010, Կառավարական տուն 3 հասցեում:

06.11.2025 թվականին, ժամը 10:00–ին կայացած նիստում հանձնաժողովը շարունակեց աշխատանքները:

8. Տեղեկություն՝ «ՏԿԵՆ-ՀԲՄԽԾՁԲ-2025/52ՏՀ» ծածկագրով հրատապ բաց մրցույթի հրավերի պահանջներին բավարար գնահատված մասնակիցների հետ գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցություններ վարելու մասին

8.1 Կազմակերպված բանակցություններին մասնակիցներն ապահովեցին իրենց մասնակցությունը և ներկայացրեցին նոր վերանայված գնային առաջարկներ:

Չափաբաժին 2 S-2-26, /S-2-25/ (Բարձրաշեն) - Երևանի սահման (Նուբարաշեն) մարզային նշանակության ավտոճանապարհի կմ0+000-կմ1+400 հատվածի հիմնանորոգման աշխատանքների նկատմամբ տեխնիկական հսկողության ծառայություն

Հ/Հ	Մասնակիցների անվանումները	Գինն առանց ԱԱՀ	ԱԱՀ	Ընդհանուր
1	**«Սուար» ՍՊԸ**	**1 950 000**	**0**	**1 950 000**
2	«Արխինէքս» ՍՊԸ	**1 999 999**	**0**	**1 999 999**

9. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա ՏԿԵՆ-ՀԲՄԽԾՁԲ-2025/52ՏՀ ծածկագրով հրատապ բաց մրցույթի ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցների որոշման մասին

Հանձնաժողովը որոշեց՝

9.1 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 6-րդ մասը՝

- 1-ին չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչել՝ «Արխինէքս» ՍՊԸ-ին:
- 2-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչել՝ «Սուար» ՍՊԸ-ին:

9.2 Հանձնաժողովը որոշեց հաստատել **ՏԿԵՆ-ՀԲՄԽԾՁԲ-2025/52ՏՀ** ծածկագրով հրատապ բաց մրցույթի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

9.3 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասը՝ անգործության ժամկետ սահմանել 10 օրացուցային օր:

9.4 Հրավերով սահմանված ժամկետում պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել «Արխինէքս» ՍՊԸ-ին և «Սուար» ՍՊԸ-ին:

10. Տեղեկատվություն՝ կարգի 32-րդ կետի 25-րդ ենթակետով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և

խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ

10.1 Հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ներկայացվել:

11. Տեղեկատվություն՝ հրավերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

11.1 Մասնակիցների կողմից հրավերի վերաբերյալ հարցումներ չեն կատարվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝	**Հարություն Սեդրակյան**	.....
Հանձնաժողովի անդամներ՝	**Աստղիկ Խաչատրյան**	.....
	Հրանտ Մինասյան	.....
	Էդգար Ֆրանգուլյան	.....
	Լաուրա Գևորգյան	.....
Քարտուղար՝	**Անի Բաղալյան**	.....